Պարույր Սևակ

Անվերնագիր 17

Մեր տնից ձեր տուն՝ կավաշեն մի պատ,
Եվ այգուց այգին՝ մի բարակ առու,
Մեր հին տանձենու ճյուղը մրգապատ,
Մեր փշատենին մեջքով իր սապատ
Ձեր այգու մեջ են մրգերը փռում:
Մեր տնից ձեր տուն մի պատ է միայն,
Իմ սրտից սիրտըդ՝ պարիսպ ահագին,
Որ ինձ օղակեց այս երեկոյան,
Ինչպես նշանի մատանին քո այն՝
Ձվարթ աղմուկում նշանդրեքի:
Մեր այգին ցավից կուչ եկել հիմա,
Ցանկապատվել է փշով մասրենու,
Եվ ամոթահար՝ քո դրժման համար՝
Ձեր ասող-խոսող առուն էլ հիմա
Թփերի մեջ է անվերջ թաք կենում:
Ձարմանքից ապշած՝ մեր հին տանձենին
Բարի գլուխն է թափ տալիս ցավով.
Մեր անուրջներին, շշուկին սովոր՝
Ուսն է թոթափում և ձեր հացենին -
Իրավունք ունի, նա՛ չէ հանցավոր:
Հիմա ի՞նչ անել, ի՞նչ է հարկավոր:

Թո՛ղ որ ժողովը քո հարցը քննի,
Թո՛ղ որ քեզ այնտեղ կոչեն «քաղքենի»,
Թո՛ղ որ հորջորջվեն «պսակ ու քավոր»,-
Սերը չես ծածկի փրփուրով քենի...
Մեր տնից ձեր տուն՝ լոկ ցածրիկ մի պատ,
Իմ սրտից սիրտըդ՝ պարիսպ ահագին:
Քո մատի վրա դեռ թանաքապատ
Այդ դո՛ւ ես կրում մատանիդ հպարտ,
Բայց նա սեղմում է ի՛մ սիրտն ու հոգին:

14.V.1946թ. 20.VII.1953թ.
Երևան Նավչալու